

ՄԻ ՔԱՆԻ ՀԻՆ ՍԵՄԱԿԱՆ ԲԱՌԵՐ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ն. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Ինչպես անվիճելի է հայերենի հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելը, այնպես էլ անվիճելի է նրա բառամթերքի մեջ ոչ հնդեվրոպական, սեմական ծագում ունեցող մի հզոր բառաշերտի՝ եբրայերեն, ասսուրերեն, ասորերեն, արաբերեն բառերի առկայության փաստը, որոնց ընդհանուր քանակը, ըստ Հ. Աճառյանի հաշվումների, կազմում է շուրջ 1100 բառ: Այս թիվն, անշուշտ, պակասավոր լինելով հանդերձ, դարձյալ հրկու-երեք անգամ դերազանցում է հայերենի բնիկ հնդեվրոպական ծագում ունեցող բառերի քանակին: Եվ դա զարմանալի չէ: Հայերի նախորդների (նաև նրանց հետ ձուլված բազմաթիվ ժողովուրդների ու ցեղերի) շփումը սեմական ժողովուրդների հետ բազմաթիվ դարերի պատմություն ունի, թերևս այն ամենատևականն է եղել ու ամենավաղ սկսվածը: Անտեսելով այս կարևոր հանգամանքը, շատ լեզվաբաններ «հնդեվրոպական» են հորջորջում և այն արմատները, որոնք բացատրվում են միայն սեմականներով: Ենթադրվում է արձանագրությունների նորագույն տվյալները խոսում են այս վարկածի օգտին: Այսպես, օրինակ՝ աքադական թագավոր Նարամսինի (2259—2223) թողած արձանագրության հիման վրա աքադական սեմիտների և Արմանի՝ երկրի բնակիչների շփումները կարելի է թվագրել մ. թ. ա. XXIII դ., թերևս և ավելի վաղ: Ինչպես դրում է Լ. Ա. Լիպինը, «արդեն III—II դարերի սահմանագլխին, եթե ոչ ավելի վաղ, աքադերեն լեզուն թափանցեց Փոքր Ասիա, Էլամ, Հյուսիսային Սիրիա և հնարավոր է նաև Անդրկովկաս, ուր այն դարձավ ասսուրական (հնարավոր է և դեռևս վաղ աքադական) բազմաթիվ առևտրական գաղութների ու ֆակտորիաների խոսակցական ու գրական լեզուն»²: Հին Արևելքի միջազգային լեզվի՝ աքադերենի ու հայերենի տևական շփումների օգտին են խոսում այնպիսի փոխառություններ, որոնք վերաբերում են մինչքրիստոնեական կրոնին, հին մշակույթին ու կենցաղին: Հայերենի և հին սեմական լեզուների մերձեցումների օգտին է արտահայտվել նաև Հյուրշմանը, որը հայերենի բնիկ և օտարամույծ շերտերը քննելիս նշում է բազմաթիվ բառերի ասսուրական կամ շումերական³ ծագում ունենալը, սակայն գիտություն այն ժամանակվա տվյալները հնարավորություն չէին տալիս ավելի վաղ սեմական փոխառություններ ենթադրել, քան ասորական բառերն էին:

Սակայն հետագա ուսումնասիրողները (Բ. Խալաթյանց, Գ. Սազդյան, Յ. Կարստ, Հ. Աճառյան, Գ. Ղափանցյան) մատնանշեցին 80—100 նոր ասսուրա-հայկական ընդհանրություններ, որոնք մինչև այժմ էլ հայերեն լեզվի ակտիվ բառապաշարի մասն են կազմում: Սա ապացույց է այն բանի, որ այդ աքադական կամ ասսուրա-բաբելական, մենք կասեինք հին սեմական, փոխառությունները հայերենին են անցել ոչ գրական ճանապարհով (ինչպես հունարեն, եբրայերեն, արաբերեն փոխառությունների մեծ մասն է), այլ անմիջական շփումների՝ պատմական Հայաստանի հարավի, Արմե-Շուպրիայի, Աղձնիքի, խուրի-բիայնական ցեղախմբերի հայացման ընթացքում, որի անվիճելի ապացույցն է հանդիսանում այդ վայրերի հետագա հայ բարբառների մեջ առկա հին սեմական բառամթերքի առատությունը և հնչման հարազատությունը աքադերենին, հայերենի այլ բարբառների համեմատությամբ: Այսպես, օրինակ, հին սեմական բառամթերքի առատությունն ու բառիմաստների հարազատությունը հատկապես պահպանված ենք տեսնում Սասնո բարբառում, որ ընդհանուր հայերենին սեմական փոխառություններ փոխանցող հիմնական օղակներից մեկն է եղել: Հայերենին փոխանցված բազմաթիվ սեմական բառեր ունեն երկակի արտասանություն կամ զուգահեռ ձևեր, ինչպես օր. կլեպ/կեղև, կարաս/յրեֆս, ծիլ/ծեղ, սալոր/շլոր, թիլ/թեղ, նփատ/նաթ և այլն, որոնք արդյունք են ինչպես մի

¹ K. K. Riem schneider, Lehrbuch des akkadischen, Leipzig, 1961, էջ 163—278:

² Л. А. Липин, Аккадский язык, Москва, 1964, էջ 7:

³ Hübschmann, Die semitischen Lehnwörter im Altarmenischen. ZDMG, 1892, էջ 226—268:

քանի անգամ փոխ անվելու, այնպես էլ տարբեր լեզուների կամ բարբառների միջանկյալ օղակներով անցնելու: Քանի որ այս հանդամանքը դժվարացնում է հիշյալ փոխառությունների ժամանակը որոշելը, ուստի և մենք դեմ ենք այդ փոխառությունները աստուգական, ափսոսական կամ աստուգական կոչելուն, մանավանդ որ աստուգական կոչված փոխառությունների մեծ մասն առկա է նաև աստուգեցնելու ու ամրապնդելու, ինչպես օր. ծոմ, թանգար, գաղութ, թարգման, գուր, մաշկ, կուպր և այլն, որոնք որքան հիմք ունենք աստուգական համարելու, նույնքան էլ՝ ափսոսական կամ աստուգա-բարեկամ, քանի որ նշյունական օրենքները գրիթն նույնն են հատկապես այս շրջանի սեմականների համար, որոնք մենք կոչում ենք հին սեմականներ: Հին սեմականներից կատարած փոխառությունների համար նշյունական օրենքներ սահմանելիս սովորաբար անտեսվում են ձայնավորները՝ իբրև հերթագայող հնչյուններ, իսկ բաղաձայններից S-ի դիմաց հայերենն ունենում է շ և ս, I-ի դիմաց ղ և լ, P-ի դիմաց՝ պ և փ, Կ-ի դիմաց՝ կ և ք, I-ի դիմաց՝ տ և լ, իսկ S-ի դիմաց՝ ծ, և, ծ, զ և զ, Լ-ի դիմաց՝ խ և փ, ձայնեղներ ց-ն, ժ-ն, Ծ-ն սովորաբար խլանում են (ս, տ, կ) կամ պահպանվում: Վերջինս ավելի շուտ ուղղագրական կանոնների անտեսման հետևանք է, քան հնչյունափոխական:

ԱԼՍ = ԱԼ

Մինչքրիստոնեական կրոնի բազմաթիվ աստվածություններից մեկն էր ԱԼ-ը, որ հայերենի բարբառները պահպանել են Ալի. Ալի կամ Ալիբե ձևով: Ինչպես Նեո-ը, Խիպիլիկ-ը, այնպես էլ ԱԼ-ը շար աստվածություններ են: Այդ բանն ավելի լավ է բնութագրված ժողովրդական հետևյալ դարձվածքում. «Դեք, սատանայ, բաջք և ալին, յորոց յահն հոգիք հալին»⁴: Ս. Ամատունին տալիս է հետևյալ բացատրությունը. «ԱԼ-շար ոգի. Կլեօ, Հ. Աճառյանը՝ «Յոն մագնեթ, պղնձն եղունգներով և վարագի ժանիֆներով անեհույր էր ոգի մ'էջծ: Այստեղից էլ «Ալի պառավ», «Ալի կնիկ» արտահայտությունները, որ առկա են հայերենի բազմաթիվ բարբառներում: Հին Արևելքի սեպագիր արձանագրություններում (աբաղերեն, ասսուրերեն, խեթերեն) հանդիպում է այս աստվածությունը դարձյալ որպես շար աստվածություն՝ Ալն տառադարձությամբ: Այն հաճախ է հանդիպում անեծքի ձևակերպումներում: Ֆ. Դելիշի «Ասսուրերենի բառարանը» և Մեյսներ-Ջոդենի «Աբաղերենի բառարանը» տալիս են «Մի շար դե» բացատրությունը: Հին Միջագետքի ժողովուրդների մոտ շատ էր տարածված Ալն-ի անվամբ եղովելը, ինչպես՝ Տերա հոգին թող աստված Ալն-ն կաշկանդի» և այլն: Այս աստվածությունը խեթական սեպագիր արձանագրություններում հանդիպում է, ըստ Վ. Խաչատրյանի, Աlla ձևով⁵:

IMBARU = ԱՄՐԱԽԻ(Բ)

ՆՀԲ-ը ճիշտ բացատրելով ամբուր բառի ունեցած «ամպրուպ. խառնակուրի» օղաց, մերիկ. վորորիկ նշանակությունները, միաժամանակ փորձում է այն ստուգաբանել իբրև բարդ բառ՝ ամպ և ուտոյց բառերից. «Ամբուր— ուր և ամբուտոյց, ուտոյց ամպոց»⁶: Այն վկայված է դասական գրաբարի շրջանից, ինչպես օր.՝ «Շունը հողմաց և ամբուտից, և ուտոմուն, և փայլատակուն»⁷: Հավանաբար Հ. Աճառյանը նույնպես ընդունելի է համարել այս բառի կարծեցյալ բարդ կազմությունը և չի ներկայացրել այն իր «Արմատական բառարանում», որով փաստորեն բաց է մնում նաև առ այսօր այդ բառի ստուգաբանությունը: Այդ բառն առկա է աբաղական և ասսուրական տեքստերում՝ imbaru տառադարձությամբ, որ նույնանում է հնչմամբ և

⁴ Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 8 (այսուհետև՝ ՀԲԲ):

⁵ Նույն տեղում:

⁶ Հ. Աճառյան, Գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 51—53 (այսուհետև՝ ԳԲ):

⁷ B. Meissner, W. Soden, Akkadisches Handwörterbuch, Weisbaden, էջ 39 (այսուհետև՝ MS, AH); F. Delitzsch, Assirisches Handwörterbuch, Leipzig, 1896, էջ 60 (այսուհետև՝ FD, AH):

⁸ Տե՛ս «Материалы республиканской научно-технической конференции молодых ученых», Ереван, 1967, էջ 190—191:

⁹ «Նոր բառգիրք հայկազնան լեզուի», Վենետիկ, 1836—1837, հատ. 1, էջ 274 (այսուհետև՝ ՆՀԲ):

¹⁰ Նույն տեղում:

նշանակությամբ հայերեն ամբոտ-ի հետ imbaru-ն Ֆ. Դելիշի «Աստուրների բառարանում» բացատրվում է «փոքրիկ, մութիկ, ուժեղ մութիկ»¹¹ նշանակություններով, իսկ Մեյսներ-Ջոզենի «Աքադերենի բառարանում» թեև imbaru բացատրված է միայն «մառախուղ, մութ»¹², սակայն բերված նախադասություններում առկա է նաև փոքրիկի իմաստը, օրինակ. «Փոքրիկ նման գետին խփեցի»¹³, նույնատիպ և նույնարժեք նախադասությունների ենթ հանդիպում եաւ ասսուրա-բա-բարեւական տեքստերում՝ «նրանց imbaru-ի նման ուժգին խփեցի» և այլն, imbaru բառի ունեցած «փոքրիկ» նշանակությունն ստուգվում է նույնատիպ այն նախադասություններով, ուր այդ բառը փոխարինված ենք տեսնում IM-DUGUD «ուժեղ քամի» զաղափարագրով՝ Այն իրոք բարդ բառ է, սակայն կազմված շումերական IM «քամի» և DUGUD - baru «չար»¹⁴ բառերից և ոչ ամպ-ոտ-ից:

ANANIHU = ԱՆԱՆՈՒԽ

Հայերեն անանուխ բառի ծագման մասին եղած կարծիքներից հավանականն է համարվել նրա իրանական փոխառություն լինելը, որն ընդունում էին Հյուրշմանը, Պոտտը, Հազարդը և Աճառյանը¹⁵, Սակայն այս ստուգաբանությունը առարկելի է և՛ հնչյունական, և՛ հատկապես իմաստային առումով, չհաշված դեռ այն հանգամանքը, որ փոխատու պաշլավներենում նման բառի գոյությունն իսկ ենթադրելի է, որից պիտի հայերենին անցած լիներ այն: Հայերեն անանուխ-ը ենթադրվում է իրանական nanxāh կամ nanuxeh ձևից, որ նշանակում է «հաց, համեմ, արջնդեղ, սև սոճին, մի տեսակ սև սերմ, որ հացի վրա դնելով ուտում են»: Այն կազմված է nan «հաց» և xvaḥ «համեմ» բառերից¹⁶, ինչպես տեսնում ենք, իմաստային առումով անանուխը ոչ մի կապ չի կարող ունենալ nanxāh/nanuxeh իրանական ձևի հետ: Հայերեն անանուխի հետ նույնանում է իր հնչմամբ և նշանակությամբ արադերեն արձանագրություններում հանդիպող ananihu բառը, որ Մեյսներ-Ջոզենի «Աքադերենի բառարանը» բացատրում է «անանուխ»¹⁷:

ANDURARU = ԱՆԴՐՐ

Առ այսօր հայերեն անդուր բառը չի ստուգաբանված: Առաջարկված է եղել այն դիտել իբրև ածանցավոր բառ՝ ան ժխտականից և դուր կամ դիւր «հեշտ, հանգիստ» բառից (Մամիկոնյան, Աճառյան)¹⁸, Բայց ինչպե՞ս կարող էր գոյանալ երկրորդ Ե-ն: Անհամոզիչ են նաև մյուս ստուգաբանությունները՝ նախ իմաստային և ապա հնչյունական տարբերությունների պատճառներով: Օրինակ՝ Պ. Հազարդը այն համեմատում էր սանսկր. dhar «սառնել», Հյունքյարպեյենտյանը բխեցնում էր հուն. ανυστερον «զետափ» բառից, ՆՀԲ-ի հեղինակները լծորդ էին համարում թուրք dar-siz «ոչ նեղ» բառը և այլն¹⁹: Բոլոր դեպքերում, սակայն, բաց է մնում հատկապես կրկնակ Ե-ի գոյացության հարցը, որ հայերենին խորթ երևույթ էր և չէր բացատրվում հիշյալ առաջարկներով: Այս բառի ստուգաբանությունը հեշտացնում է սեպագիր արադերենը, ուր առկա է այն գրեթե նույն հնչմամբ և նույն նշանակությամբ: Աքադերենում այդ բառն ունի հետևյալ արտասանությունը andurāru. այն թարգմանվում է «ազատություն», «բեռից կաս» հարկից ազատ վիճակ» (Վայդենը, Մեյսներ-Ջոզենի «Աքադերենի բառարան») կամ պարզապես՝ «անդուր», ազատ, հանգիստ», օր.՝ anduraru šakanu «տուրքից ազատ», šakin and uraru niš «հարկից ազատ ժողովուրդ»²⁰:

¹¹ FD, AH, էջ 79, 316:

¹² MS, AH, էջ 375:

¹³ նույն տեղում:

¹⁴ FD, AH, էջ 79, 310:

¹⁵ Հ. Աճառյան, Հայոց լեզվի արմատական բառարան, Երևան, 1926—1935, հատ. I, էջ 283—285 (այսուհետև՝ Արմ. Բ.):

¹⁶ նույն տեղում, էջ 283—285, և նույնի Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1940 (այսուհետև՝ ՀՀՊ), հատ. I, էջ 241:

¹⁷ MS, AH, էջ 50:

¹⁸ Արմ. Բ., հատ. I, էջ 314:

¹⁹ նույն տեղում:

²⁰ MS, AH, էջ 50—51:

ABATU = ԱՊԱՏԵԼ

Ապատել բայի ունեցած նշանակությունները հայերեն բառարաններում որոշված են բավական ճիշտ. ԱԲ-ը մեկնում է՝ «կտրել, հանել»²¹ իսկ ՆՀԲ-ը «Ի բաց հատանել, բաժնալ ի բաց»²², այսինքն՝ «վերացնել, փանդել»:

Այս բառն ավանդված է Փիլոնի հետևյալ նախադասության մեջ. «Որ կամիցին յամենայն լինի մենք զնախախնամութին ի բաց հատանել, նախ առաջին դմառնացն նորա զնախախնամութին ապատեսցէ»²³: Այս բառը չի ստուգաբանված և նույնիսկ չի հիշատակված Հ. Աճառյանի «Արմատական բառարանում»: Ակնհայտորեն այն ծագում է սեմական լեզուներից և մասնավորապես արաբերենից կամ ասորերենից, քանի որ առկա է և այդ շրջանի սեպագիր արձանագրություններում նույն հնչմամբ և նույն նշանակությամբ՝ abātu: Մեյսներ-ձոդենի «Աբադենի բառարանը» abātu թարգմանում է «փանդել, ոչնչացնել»²⁴, Ֆ. Դելիչի «Ասսուրերենի բառարանը»՝ «փանդել, փլուզեցնել, փլուզել, փլուզվել»²⁵: Օրինակ՝ sibit-ta su-nu abut-ma «Նրա բանտարկությունը վերացրի»: tarbašu abut-ma «Բազը ոչնչացրի»²⁶:

Այս բառի հիշյալ նշանակությունները ստուգվում են նույնատիպ այն նախադասությունների միջոցով, որտեղ նրան փոխարինում է GUL «խփել» գաղափարագիրը:

BERKU/BIRKU = ԲԱՐԿ

Հայերեն բարկ բառն ունի «կծու, խիստ, բուռն, սաստիկ, ուժգին, զայրալից, կատաղի, այրող»²⁷ նշանակությունները: ՆՀԲ-ը տալիս է այդ բառի համարժեքությունը կայծակին ու շանքին, որն ստուգվում է Ս. Գրքի եբրայերեն և հունարեն բնագրերի համապատասխան հատվածներով, օր.՝ «...էած և ի Սողոմ զհրացան բարկութեան»: Բոլոր հիմքերով ՆՀԲ-ը գրում է. «Բարկութիւն կամ հրացան բարկութեան՝ կայծակ, շանք, երկնից»²⁸: Բարկ-ի բուն «կայծակ, կռակ, շանք» նշանակությունների հիման վրա են կազմված նաև հայերենի բարկաճայր, բարկացալտ բարդությունները:

Այս բառի ստուգաբանությամբ զբաղվել են բազմաթիվ լեզվաբաններ՝ ենթադրելով այն մերթ հնդեվրոպական, մերթ այլ աղբյուրներից²⁹, Պրոֆ. Գ. Ջահուկյանը այն փորձում է բխեցնել հ.-հ. ենթադրյալ *bhorǵ³⁰-o-s «կուպիտ, անբարեհամբույր» ձևից՝ կցելով սրան նաև հայ. բորբ, բառ³¹, ՆՀԲ-ը բխեցնում է հայ. բարակ բառից³¹: Այս բոլորի անճշտությունը բացահայտվում է արաբերենի միջոցով, ուր առկա են bṛk արմատից կազմված գոյականական և բայական ձևերը, Ֆ. Դելիչի և Մեյսներ-ձոդենի բառարանները bīrkū թարգմանում են «կայծակ», իսկ barāku(m)՝ «կայծակ, լուսավորել»³² (հմտ. խեթական Շանթ աստվածը և հայ. շանթ, շանթել «բարկություն, բարկանալ» ձևերը): Աբադական շանթի և կայծակի աստված Ադադը հաճախ է դրվում IM «սոթորիկ» գաղափարագրով կամ նրան համարժեք bīrkū բառով: Նմանապես շար աստվածություն Ner անվանումն էլ է փոխարինվում նույն bīrkū համարժեքով: Բայական ձևի թարգմանալ, կրակվել» նշանակությունը լավ է երևում հետևյալ նախադասության մեջ. «Նրբ մի կին բարկացած աչքեր ունի, նրա դեմքը կարմրում է»: Աբադական արձանագրություններում նշվում է barīkatu, bārīku կամ bārāqu(m) անվամբ մի բույս³³, որ հավանաբար տաքդեղի նման այրող կամ կծու համ ունի:

21 Առձևոն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 105 (այսուհետև՝ ԱԲ):

22 ՆՀԲ, հատ. I, էջ 274:

23 Նույն տեղում:

24 MS, AH, էջ 5:

25 FD, AH, էջ 12—13:

26 Նույն տեղում, էջ 5:

27 ՆՀԲ, հատ. I, էջ 460: ԱԲ, էջ 178:

28 Նույն տեղում:

29 Արմ. Բ., հատ I, էջ 1013—1015:

30 Г. Джаукян, Очерки по истории дописменного периода армянского языка, Ереван, 1957, էջ 126:

31 ՆՀԲ, հատ I:

32 FD, AH, էջ 187: MS, AH, էջ 106—7, 122:

33 Նույն տեղում:

GUGU = ԳՈԳ

Հայերենի զոգ «ասել» բառը, ինչպես իրավացիորեն նշել է Հ. Աճառյանը, ունի նաև «գո-
չել, բղավել» նշանակությունները, որ լավ է զգացվում հատկապես Կյուրեղի զործածած հետևյալ
նախադասության մեջ. «Ասացեք ցարքայ, գոգեք» կամ «Ասիցէն, գոգեն» և այլն: Այս բառը
փորձել են ստուգաբանել տարբեր ձևերով՝ հայերեն ոգել, գոչել, կեչել, հեգել, հազազ բառերից
(ՆՀԲ, Տերվիշյան, Շեֆտելից, Բուդդե, Հյունբյարպեյենտյան), շումերական ցւց «ասել» ձևից
(Սազգյան, Կարստ), հ.-և. *uogwū «հանդիսավոր խոստանալ» արմատից (Մեյե, Աճառյան)³⁴.
Իսկ պրոֆ. Գ. Զահուկյանը զոգ-ը և ոգել-ը միաժամանակ փորձում է բխցնել միևնույն *uogune
/*eueguh «հանդիսավոր խոսել» արմատից³⁵, Բոլոր ենթադրություններն էլ մերժելի են հատ-
կապես հնչյունական անցումների տեսանկյունից: Իսկ շումերական ցւց «ասել» բառը, որն իս-
կապես հայերեն զոգ-ի հիմքն է, պետք է, որ հայերենին անցած լինի կամ խուռի-միտանի-նախ-
րի երկրների ժողովուրդների միջոցով, կամ ասսուրա-բաբելոնյան, ուր նույնպես առկա է այդ
բառը: Աքադերենում ցւցւ օգտագործված է «գուչել, կոչ, բղավոց» նշանակությամբ³⁶:

DUŠUPPU = ԴՈՇԱԲ

Հայերեն բարբառներում առկա դշաբ բառով է որակվում խաղողի կամ այլ մրգերի քաղ-
ցուից եփվող մալը կամ ռուպը: Իրրև հինարևելյան մինչքրիստոնեական կուլտային ուտելիղեն-
ներ, սկազգիր արձանագրություններում հս-ռաի են հիշատակվում մաբը և դոշաբը: Աքադական
արձանագրություններում այն հանդիպում է dašpu, dišpu, dusuppu, dašuppu գրչությու-
ններով և նշանակում է «մի քաղցր խմիչք», «մի քաղցր խմիչք, մեղր»³⁷, նրա այս նշանակու-
թյուններն ստուգվում են նրան հաճախ փոխարինող հոմանիշ matku «մաթ» բառի միջոցով³⁸:

HAMURU = ԽԱՄՐ-ԵԼ

Հայերեն խամր կամ խամուր (քանի որ ավանդված են նաև դիւրախամուր, աւազախամուր
ձևերը) բառի ծագման վերաբերյալ կան միայն իրարամերժ կարծիքներ. ՆՀԲ-ը այն լծորդ է
համարում հայ. խամր և համր բառերին, Հյունբյարպեյենտյանը՝ ամուր, Կարստը թ. թաթարական
yab, yav, yam «նիհար, տգեղ» ձևերից է բխցնում, իսկ Հ. Աճառյանը համարում է «փոխա-
ռություն կովկասյան լեզուներից»՝ կցելով վրացական խմելի շոր» և գամխմերի «շորացած,
քարթու» բառերին, որոնց արմատն է համարում xṃ «շորանալ» ձևը³⁹:

Մեր կարծիքով, հայերեն այս բառի հետ նույնանում է սկազգիր խեթերենում, խուռիերե-
նում և աքադերենում հանդիպող hamuru/hamaṛu բառը, որի նշանակություններն են ըստ
Մեյսեներ-Չոդենի «չորանալ, ոչնչանալ, փչանալ, նվաղել, քուլանալ»⁴⁰, Այս բայով է արտահայտ-
վում որևէ առարկայի կամ երևույթի չորանալու, մարելու, խամրելու, փչանալու գործողությունը,
եր. «Դաշտը խամրեց»: «Նրա աչքերը խամրեցին»: «Լեզուն չորացավ» և այլն⁴¹:

Ծիշտ և ճիշտ նույն նշանակություններով է ընկալվում նաև հայերեն խամրել կամ խամուր
բառը, ՆՀԲ և ԱԲ-ում՝ «Թոռմիլ, բոշմիլ, քուլանալ, աւուիլ, չորնալ, փնանալ»⁴², «Թառամիլ,
րաւշամիլ, չորանալ, քուլնալ, բրանալ, դիշանիլ, շիշանիլ, եղծանիլ»: Օր.՝ «... համրացեալ մե-
ռանին ամենայն բոյսք»: «համրացի հնոց»: «Արեն խամրի»: «խամրես զշորն» և այլն⁴³:

HIŠŠU = ԽԻՃ

Հայերեն խիճ բառի ծագման վերաբերյալ կան բազմաթիվ և իրարամերժ կարծիքներ (վրաց.
կածի «գալախազ» բառից՝ Չուբինով, հայ. ցեխ-ից՝ Հյունբյարպեյենտյան, գերմ. Kies «խիճ»

34 Արմ. Բ., հատ. 2, էջ 239—241:

35 Г. Джаукян, Очерки..., էջ 91, 227:

36 MS, AH, էջ 296:

37 MS, AH, էջ 179: FD, AH, էջ 230:

38 նույն տեղում:

39 Արմ. Բ., հատ. 3, էջ 354—355:

40 MS, AH, էջ 315, 355:

41 նույն տեղում:

42 ԱԲ, էջ 367:

43 ՆՀԲ, հատ. 1, էջ 917:

բառից՝ Հ. Երեմյան, վրաց. խվիճճի. կեննի բառերից՝ Ղափանցյան, ավարական զամած «բար» բառից՝ Մառ, հայ. կիճ, կուն և խիճ միացնում է՝ Հ. Աճառյան⁴⁴ և վերջապես հ.-հ. *(s)k(h)ed-, (s)k(h)e-n-d «ճեղքել, ցրել» արմատից՝ Ջահուկյան⁴⁵։ Մեր կարծիքով, արված ենթադրություններն անընդունելի են թե՛ իմաստների, թե՛ հնչյունական անհամապատասխանությունների պատճառով։

Աքաղա-հայկական մի բանի ընդհանրություններ ցույց են տալիս, որ հայերեն և-ի դիմաց աքաղերենն ունենում է հ, օրինակ՝ šipputu-ճիպուտ, šupru-ճապուռ։ Այս օրինակաբանությունը հաստատվում է նաև հայերեն խիճ-ի աքաղական զուգահեռով, որը գտնում ենք hišsu տառադարձությամբ։ Մեյսներ-Ջոզեֆի «Աքաղերենի բառարանը» hišsu բացատրում է «խիճ», որը շատ հաճախ հանդիպում է NA₄ «բարե» որոշիչի հետ միասին⁴⁶։ Հետաքրքրական է նաև այն փաստը, որ խոսքի մեջ հանդիպող hišsu u eperi «խիճ և ապառ»⁴⁷ արտահայտությունը հանդիպում է նաև դասական հայերենում՝ «զխիճն և զապար», «զխիճն և շաղախ» ձևերով։

HURHU = ԽՈՐԽ

Խորխ-ը հայերեն մատենագրությամբ չի ավանդված, սակայն առ այսօր կենդանի է այն և՛ հայ բարբառներում, և՛ դրական լեզվում։ Ս. Ամատունու, Հ. Աճառյանի, Ս. Մալխասյանի բառարաններում գտնում ենք նրա բացատրությունները՝ «ոռպես խուխ, րոմ պլղամոտ», «խուխ, մաղսս...» բառերով⁴⁸։

Մեր կարծիքով այս բառը ծագում է սեմական աշխարհից. այն առկա է նաև աքաղական արձանագրություններում hurhummatu ձևով։ Որ այս ձևի մեջ ummatu ածանց է, կարող ենք համոզվել և այլ օրինակներով. այսպես՝ «սուգ» բառը աքաղերենում ունենք šigû, šakkuummu, šakumatu ձևերով, որոնց մեջ արմատականն է sagû⁴⁹։ Հետևաբար hurhummatu ձևից ես առանձնանում է նրա արմատը՝ hurhu։ Hurhummatu-ն Մեյսներ-Ջոզեֆի «Աքաղերենի բառարանը» բացատրում է «փրփուր» նշանակությամբ⁵⁰։ Այն հանդիպում է իբրև հեղուկ նյութերի՝ գարեջրի, յուղի, կաթի, ջրի փրփրալին մասը կամ բավել որակող բառ։

HURŠU = ԽՈՐՇ

Հայերեն խորշ բառը թեև խիստ բազմիմաստ է հանդես գալիս, սակայն նրա հիմնական և թերևս նախնական նշանակությունն է «գոգավոր տեղ»-ը⁵¹։ Այս բառը փորձել են ստուգաբանել հայ. խոր բառից՝ առանց պատճառաբանելու շ-ի հավելումը (նշՐ), խոժոռ-ից (Հյունքյարպի-յենտյան), ասոր. hursu «լեռ»-ից կամ եբր. xōreš «լեռ»-ից (Բ. Խալաթյանց) և այլն⁵²։ Իսկ Գ. Ջահուկյանը հայ. խոր բառի հետ միասին խորշ-ը փորձում է բխցնել հ.-հ. sor [$\left< *so(u)oro- \left< *kōuōro- \right>$]⁵³ արմատից։ Այս բառը իր հնչմամբ և նշանակություններով կապվում է աքաղական hursu բառի հետ, որ թարգմանվում է «մթերանոց, բնակարան»⁵⁴։ Օրինակ, հանդիպում են hursu nisirtu «գանձի պահեստ», bit hurse «բնակելի խորշ», ina bit hurse Takultu «Թաղուլթու աստծո բնակարանում»⁵⁵ և շատ այսպիսի արտահայտություններ, որոնց համարժեք են նաև հայերենի խորշի նշանակությունները, օր.՝ «ի սենեակս շտեմարանաց խորշից»։ «Գարէն խորշը խորհրդոց»։ «Ծոնան իջևալ խորշ մի նախն» և այլն⁵⁶։

44 Արմ. Բ., հատ. 3, էջ 453—454։

45 Г. Д ж а у к я н, Очерки..., էջ 114։

46 MS, AH, էջ 349։

47 Նույն տեղում։

48 ՀԲԲ, էջ 289—290։ ԴԲ, էջ 486։

49 FD, AH, էջ 639—640, 686։

50 MS, AH, էջ 359։

51 ՆշՐ, հատ. 1, էջ 979 և ԱԲ, էջ 392։

52 Արմ. Բ., հատ. 3, էջ 624։

53 Г. Д ж а у к я н, Очерки..., էջ 190։

54 MS, AH, էջ 359—360։

55 Նույն տեղում։

56 ՆշՐ, հատ. 1, էջ 979։

HABĀLU = ԽԻՊԻԼԻԿ

Հայերեն խիպիլիկ (խպիլիկ, խիպիլիակ) աներևույթ շար ոգու անունը ավանդված է գրա-
քարի դասական շրջանից և այսօր էլ գործածական է բաղմաթիվ բարբառներում։ Սա հայ
հեթանոսական կրոնից մնացած մի թանկագին մասունք է, որի հետքերը գնում են մինչև Հին
Արևելքի ժողովուրդների պատմության ակունքները՝ մ. թ. ա. 3000—4000 տարի առաջ։ Նշբ
տալիս է այդ ոգու հետևյալ բացատրությունը. «Յնուր գիշերոյ մտացածին կամ առ աշտ տես-
վեամբ», ապա բերում է հետևյալ աղոթքը, ուր խիպիլիկը հանդես է գալիս սատանային նույնար-
ժեք ոգու նշանակությամբ. «Պահպանեա զիս ի կառնեաց ցնորից, ի սասաից սատանայի, ի ծառ-
րուրեմի, խիպիլկաց»⁵⁷, Ս. Ամատունու ՀԲԲ-ը տալիս է «չառ ոգի»⁵⁸, իսկ Հ. Աճառյանի ԳԲ-ը՝
«մղձաւանք, աներևոյր ոգի»⁵⁹ բացատրությունը։ Այս շար ոգուն կամ աստվածությանը վերա-
գրում են մարդկանց շնչահեղձ անելու, կրծքին չոքելու, ճնշելու, նեղելու, շարշարելու հատկու-
թյուններ, որոնցով նա կապվում է ունական լեզուներում առկա հեղ արմատի հետ, որից
կաղմված habālu պարզ բայը նշանակում է «վնասել, ավերել, պղծել, բռնանալ, կաշկանդել,
ոչնչացնել»⁶⁰, իսկ Մեյսներ-Ջոզենի բառարանը նշում է l-dUTU աստվածության նույնությունը
habālu բառի հետ, որ թարգմանում է «բռնություն, բռնակալություն»⁶¹։ Հայերենի համար սո-
վորական երևույթ է փոխառյալ բառերի վերջում -իկ, -ակ, -ուկ վերջածանցներ կցելը (հմտո-
ցիրցու—կրակ, a-gar-ra—ազառակ և habālu—խիպիլիկ կամ խպիլիկ/խիպիլի և այլն)։

HA(H)HU = ԽՈՒԽ

Հայերեն խուխ «թուր, մաղաս» բառի ծագման մասին կան միայն հակասական կարծիքներ
(հուն. χούχ «մաղա», կամ xouvos «թույլ, մեղկ» բառից՝ Նշբ, պարսկ. kük «հազ» բառից՝
Հյունքյարպկյենտյան⁶², հ.-և. ենթադրյալ *k'ekū cacare *k'ekur-kekun «աղբ, կու» արմատից՝
Գ. Ջահուկյան)⁶³։

Հիշյալ առաջարկները անընդունելի են թե՛ հնչյունական անցումների, թե՛ իմաստների
տարբերության պատճառներով, մինչդեռ ավելի հավանական է դառնում այս բառի սեմական
ծագում ունենալու վարկածը, քանի որ այն նույն հնչմամբ և նույն նշանակությամբ առկա է
աքադերենում։ Մեյսներ-Ջոզենի բառարանը habū/habhu, huḫitu(m) թարգմանում է «լուռ»,
մաղաս, առտարոսնա՝ իմաստներով, իսկ բայական habū ձևը՝ «թքել, խորխել»⁶⁴, Խուխ—ն ունենք
դասական գրաբարի մի քանի գրչություններով՝ խոխ, խոխ, խիխ, խալ, խոդ, խոդ, ինչպես՝
«Հազայր և թքանէր զխուխ», «Ընդ հազալն բերէր խոդ և թքանէր»⁶⁵ և այլն, որոնց տարբեր գրու-
թյուններն արդյունք են փոխատու լեզվում ևս այդ բառի ունեցած տարբեր արտասանությու-
նների։

SUBĀTU = ԾՊՏ-ԷԼ

Հայերեն ծպտել բառն օգտագործվում է «հազուստ փոխել, արտաքնապես փոխվել, ծածկվել,
թաքնվել, պահվել»⁶⁶ նշանակություններով։ Այս բառը փորձել են ստուգաբանել տարբեր ձևե-
րով. թուրք. tebtik և արաբ. tabdel, bdl բառի հետ համեմատել են Նշբ-ի հեղինակները,
հայ. շպար բառից է բխեցնում Հյունքյարպկյենտյանը⁶⁷, իսկ Գ. Ջահուկյանը հայ. խուփ բառի
հետ միասին ենթադրում է ընդհանուր մի շնչյալ հ.-և. արմատից՝ [*(s)keu- «ծածկել, փաթաթել»
նշանակությամբ⁶⁸։ Այս կարծիքների անընդունելիությունն է հաստատում աքադերենում առ-

57 Նույն տեղում, էջ 945։

58 ՀԲԲ, էջ 279։

59 ԳԲ, էջ 469։

60 FD, AH, էջ 266—267 և MS, AH, էջ 301—302։

61 MS, AH, էջ 301։

62 Արմ. Բ., հատ. 3, էջ 644—645։

63 Г. Джаукян, Очерки..., էջ 119, 191։

64 MS, AH, էջ 308, 353։

65 Նշբ, հատ. 1, էջ 983։

66 Նույն տեղում, էջ 1028 և ԱԲ, էջ 412։

67 Արմ. Բ., հատ. 3, էջ 832։

68 Г. Джаукян, Очерки..., էջ 260։

կա *ṣubātu* բառը, որն ունի «զգեստ, հագուստ, շոր»⁶⁹ նշանակությունները և հանդես է գալիս նաև իբրև որոշիչ՝ հագուստեղեն նշանակող բառերից առաջ, ինչպես *ṣubat aširu* «սզազգեստ», *pagru ṣubat* «շապիկ», *ṣubat belūti* «տիրության զգեստ» և այլն⁷⁰ (հմմտ. արադական *ḥalapu* «ծածկել» բառից հայերեն հալալ «զգեստ»)։

KANNU(M) = ԿԱՆ-ՆԵԼ

Հայերեն կան «ուրբ, շրջան, պտույտ», որից կանել, կան ածել, կան դալ, «ուրերել, փաթաթել, գալարել»⁷¹ բառերի ծագման վերաբերյալ ոչ մի ստուգաբանություն չկա, եթե չհաշվենք Գ. Ղափանցյանի այն ենթադրությունը, որ դրանք կարող են փոխառյալ լինել վրացական ծնա «հյուսել» բառից⁷²։ Այս առաջարկն անընդունելի է, որովհետև չկան այլ վրացերեն փոխառություններ, որոնց մեջ վրացերեն ձ-ին համապատասխաներ հայերեն կ-ն։ Կան և կանել ձևերն ավանդված են բաղմամբով բարբառներով և մատենագրությամբ. օրինակ, Առաքել պատմիչի մոտ հանդիպում ենք այդ բառի գործածությանը հետևյալ հատվածում. «Ջպարանս կանթեղին... արկին ի գլուխս արեղայիցն... և սկսան կանել դփայտն, և ի կանել փայտին՝ պարանն ևս ուրերալ և մանեալ եղև»⁷³։ Բարբառներում կանել նշանակում է նաև մանել, ոլորել։ Հնչմամբ և նշանակությամբ նույնանում է հայերենի հետ արադա-ասսուրական *kannu(m)* բառը, որ թարգմանվում է. «կապ, ոլորք, փաթույթ», «հագուստ փաթաթել, օձի ոլորք, գալար» և այլն⁷⁴։

KUNIN(N)U = ԿՆԻԻՆ

Հայերեն կնին «պրտու, ճիլ» բառը փորձել են ստուգաբանել Գ. Սազգյանն ու Յ. Կարստը շուամերական GIN, GI «եղեգ» բառից՝ կցելով նաև հայ. ջիլ-ը⁷⁵։ Մեր կարծիքով, ավելի ճիշտ կլիներ կնին-ը բխեցնել արադական *kunin(n)u* «մի եղեգնյա ցողուն»⁷⁶ բառից, որն իր հնչմամբ ավելի է մոտ հայերենին։

MAKULLA = ՄԱԿԱԼ-ԵԼ

Հայերեն մակաղ, մակաղել «ծողովել, հավաքել» ձևերը ենթադրվել են ասորերենից՝ միայն եբրայերենում առկա *mikolē* «ցանկապատած տեղ ոչխարների համար» բառի առևայությանը (Հյուրըման, Աճառյան)։ ՆՀԲ-ը կարծում է բարդ բառ՝ հայ. մակ-աղի բառերից, իսկ Հյուսիսարևելյանից՝ դրափոխությամբ հայ. կաղամալս-ից⁷⁷։ Առկա է նաև հուն. μαχαλα ձևը, որ պետք է ենթադրել փոխառություն սեմական լեզուներից։ Մեր կարծիքով, հայերեն ձևերի ծագումը նույնպես պիտի համարել Հին Արևելքից, սակայն արեղերենից. ուր գտնում ենք այդ բառը՝ *makullu* ավելի հարազատ հայերեն հնչմանը։ Մեյսներ-Ջոզենի «Աբադեյների բյուրարան» բացատրում է *makullu*, *mukallu* «կանգառի տեղ», որ կազմված է *kal* «կալել, պահել» բառից և *ma* նախածանցից⁷⁸։ Հայերենում դասական շրջանից ունենք և մակաղ «հանգստարան», և մակաղել «հանգրտացնել»⁷⁹ ձևերը։

MUKANU = ՄԱԿԱՆ-ԵԼ

Հայերեն մական «գաւաղան, ցուպ» բառի ծագումն անհայտ է, եթե չհաշվենք Ն. Յ. Մառի ենթադրությունները չերեզ. փխա, հայ. փալտ, բասկ. *makilatu* «ծեծել» ձևերից։ Աճառյանը «պատահական նմանություն» է համարել ասորական *maqale* «զավաղան» և հայ. մական-ի նույնա-

69 FD, AH, էջ 563։

70 Նույն տեղում։

71 Արմ. Բ., հատ. 3, էջ 943։

72 Նույն տեղում։

73 Նույն տեղում։

74 MS, AH, էջ 438։

75 Արմ. Բ., հատ. 3, էջ 1183—1184։

76 MS, AH, էջ 507։

77 Արմ. Բ., հատ. 4, էջ 745։ Նույնի ՀԺՊ, հատ. 1, էջ 339։

78 MS, AH, էջ 588։

79 ՆՀԲ, հատ. 2, էջ 192։ ԱԲ, էջ 534։

հնչյության փաստը⁸⁰։ Մինչդեռ աքաղաղենում առկա *miakanu(m)* «փայտածող, դավադան»⁸¹ բառը նույնպես հաստատում է այդ ձևի սեմական ծագումը, որտեղից էլ մենք ենթադրում ենք հայերեն մական, մականել «ծնծել» (բառացի՝ փայտել) ձևերի փոխառյալ լինելը։

Դասական հայերենից նույն աքաղականի նշանակությամբ ունենք «Մական ծերության», «Ոչ դաւադանաւ և մականաւ»։ «Մականեաց զապարանսն զանադան հարուստովք»⁸² և այլն։

MARRU = ՄՌՈՒ

Մոու բառը այն «զժբախտներից» է, որ չի ավանդվել դասական մատենագրությամբ, բայց առկա է հայերենի շատ բարբառներում։ Այն ընկալվում է «բարկ, կծու», «կծու, մորմոքող»⁸³ նշանակություններով, որոնցով բնորոշվում է հատկապես սոխի կամ տաքդեղի համը («մոու սոխ», «մոու տաքդեղ» և այլն)։

Մինչև այժմ ոչ ոք չի փորձել ստուգաբանել մոու բառը։ Նույն հնչմամբ և նույն նշանակությամբ այն գտնում ենք նաև աքաղական արձանագրություններում, ուր *marru* բառը հանդես է գալիս իբրև բույսի կամ այլ նյութերի համ բնութագրող բառ, օր. «մոու սալաթ» «մոու ճաշ»։ Գործածական է նաև մոուանալ բայական ձևը՝ *marāru* հնչմամբ։ Մեյսներ-Ջոզենի «Աքաղաղենի բառարանը» *marru* և *marāru* բացատրում է «մոու» և «մոուանալ» բառերով⁸⁴։ Իսկ Ֆ. Դելիշի «Ասսուրերենի բառարանում» հանդիպում ենք հետևյալ ուշագրավ դիտողությանը. «*marru* — պարտեղի դառն մի բույս, փոխարինվում է *HI.IŠ.TUR.SAR* գաղափարագրով, բացատրվում է անմիջապես կողքին գտնվող *gu-za-zu*-ի միջոցով»⁸⁵։ Իսկ վերջինս կարող է նույնանալ հայ. կծու-ին *guzazu > guzu > կծու* անցումով։

NĒRU = ՆԵՐՈՒ (Ն)

Հին Արևելքի ժողովուրդների ընդհանուր կրոնի գլխավոր աստվածություններից մեկն էր Նիր, որի ստուգաբանությունը առ այսօր մնում է հայագիտության մեջ անորոշ ու խճճված։ Այն դարձել է լեզվաբանական մարզաքննիչի ղոհներից մեկը. այսպես՝ ՆՀԲ բխեցնում է ներոն կայսեր հունաձև անվանումից, որն ընդունում են Հյուսիսարևելյան տյանը, Աճառյանը և որոշ վերապահությամբ՝ նաև Հյուսիսայինը, Լադարդը բխեցնում է սանսկր. *nīṣṭya* «մերժում, արհամարհանք» բառից, Ղ. Ալիշանը՝ գերմ. *nores* «մարդկանց բախտ գրող վհուկներ»-ի⁸⁶ անվանումից և այլն։ Թ. Ավդալբեգյանը փորձում է հիմնավորել Միհր>Նեոն անցումը՝ և՛ հնչյունաբանական և՛ պատմա-բանասիրական փաստարկներով⁸⁷։ Մինչդեռ իրականությունն այն է, որ Ս. Գրքի թարգմանության ժամանակ և այլ կրոնական աշխատություններում Նեո բառով են փոխարինված հունական Անտիքրիստոս, Դերաքրիստոս անվանումները։ Ուրեմն թարգմանիչներն օգտագործել են մի այնպիսի համարժեք, որը գիտակցվում էր հայերենում։ Եվ իսկապես, առ այսօր էլ բարբառները պահպանել են «նեո մարդ ա», «ինչպես նեո օձ», «նեո դև» արտահայտությունները, որի համար Ս. Ամատունին բացատրում է. «Նեո — չար, դաժան, ռիսկալ, խստասիրտ»⁸⁸։ Դավանաբանական դրականության մեջ Նեո-ին համարժեք օգտագործված է նաև «Ուրդի կուրաեան» արտահայտությունը։ Այս նշանակություններով և հայերենի հնչմամբ աքաղական արձանագրություններում առկա է *Neru/Niru-ն*՝ որպես չար աստվածություն⁸⁹։ Նույն բառից կազմված բայականը՝ *neru, naru* նշանակում է «ոչնչացնել, խլիել, սպանել», իսկ *nirtu*՝ «սպանող»։ *Nêr*-ի «ոչնչացնող» նշանակությունն ստուգվում է նույնատիպ նախադասություններում նրան փոխարինող համարժեք *ŠAG.IŠ.RA* «ոչնչացնող» գաղափարագրով⁹⁰։

80 Արմ. Բ., հատ. 4, էջ 747։

81 MS, AH, էջ 669։

82 ՆՀԲ, հատ. 2, էջ 192։

83 ՀԲԲ, էջ 492։ ԳԲ, էջ 799։

84 MS, AH, էջ 612։

85 FD, AH, էջ 427։

86 Արմ. Բ., հատ. 4, էջ 413։

87 Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 65—80։

88 ՀԲԲ, էջ 501։

89 FD, AH, էջ 439։

90 Նույն տեղում, էջ 439—440։

ŠAMRU = ՇՄՐ

Հայերեն շմր բառի ստուգաբանության համար արված են խիստ անհամոզիչ ենթադրություններ, ինչպես՝ խմոր-ից (ՆՀԲ), շ-մոլորիս-ից (Տերվիշյան), զ-մոլորեալ-ից (Հյունքյարպեյենտյան)։ Հ. Աճառյանը այն նույնացնում է շմոր-ի հետ և այլն⁹¹։ Ինչպես է ընկալվում շմոր-ի նշանակությունը հայերենում. «Կոխ, անհամաձայնություն, իրարու հետ ինկնալ, խռովություն»⁹² և այլն։ Նույն հնչմամբ և նույն նշանակություններով այս բառն առկա է նաև արաբերենում, ասսուրերենում։ Ֆ. Դելիշի «Ասսուրերենի բառարանում» ŠAMRU բացատրվում է զրևի նույնպիսի հոմանիշներով՝ «Ջալուր, կոխ, անհամաձայնություն, կատաղություն, վայրենություն»⁹³, Օր.՝ «Իմ զորքը տեսավ āga šamru (սկստաղած, զայրալից հորձանքը)։ Ana ilani šamriš «Աստվածների կատաղությունը»⁹⁴ և այլն։ Դասական հայերենից ունենք՝ «Ակսալ շմորն և խռովությունն ի մէջ քաղատրաց»։ Ճանկ ածեալ զամենայն շմորս և զկոխս իւր»⁹⁵ և այլն։

ŠURU = ՇՐ

Հայերեն շր բառը առ այսօր մնում է չստուգաբանված։ Այն ընկալվում է «հագուստ», «կտոր», «լաթ, լաթեղէն»⁹⁶ նշանակություններով։ Հետաքրքրական է, որ այս բառն ավանդված է հենց Փոքր Ասիայի Քյուլ-Քեփի արքայական գաղութից պեղված սեպագիր արձանագրություններում (պատմական Մաժարի մոտակայքում)։

Արաբերենում շր-ը տառադարձվում էր šuru ձևով, որը Յանկովսկայան թարգմանում է «էժանագին սև զործվածք»⁹⁷։ Այս նշանակությունն ավելի վստահելի է դառնում, քանի որ բաղմիցս օգտագործվում է նաև TUG «կտոր, զործվածք» գաղափարագիր որոշիչով։

ŠIGŪ = ՍՈՒԴ

Եթե հայերեն սուգ բառն առաջացած լինել պիտի, ենթադրյալ *šūg ձևից, ապա, ինչպես իրավացիորեն նշում է Հյուբշմանը, այն պիտի ունենար *սոյլ կամ *սոյ ձևը, իսկ ԼՔԼ ենթադրվելու հ.-է. k'uk'-o-ից, ապա k'-ն հայերենում չէր կարող տալ q⁹⁸։ Ավելի ճիշտ է թվում Յ. Կարստի ստուգաբանությունը, որը ենթադրում էր այն շումերական šig «ցավալի, վիշտ» բառից⁹⁹, որ անցնելով արաբերենին, ստացել է šigu կամ ածանցված՝ sakummu, sakummatu ձևերը, որոնք թարգմանվում են «բուռն վիշտ, ողբ, ողբալ»¹⁰⁰ նշանակություններով։ Մեր կարծիքով, արաբա-ասսուրական ակունքներից էլ այն անցած պիտի լինի հայերենին։

ŠURBU = ՍՈՒՐԲ

Հայերեն սուրբ բաղմիմաստ բառի ստուգաբանության ցանկն իսկ թվելը մեզանից կարող է խլել մեկ էջ։ Այն ենթադրել են կամ ստուգաբանել հնչյունական բարդ անցումներով և՛ հ.-է. ա-կունքներից, և՛ այլ լեզուներից՝ իբրև փոխառություն։ Օր.՝ հ.-է. *k'u-bn-ro «լուսավորել, լուսավոր» ենթադրյալ ձևից (Հյուբշման, Աճառյան, Մյուլլեր, Բյոտիս, Ջահուկյան և այլք), արաբ. շերիֆ և պրսկ. սիւրպե ձևերից (ՆՀԲ), գոթ. սիֆեր բառից (Ալիշան), արաբ. շերիֆ և հայ. սերովբե ձևերից (Տերվիշյան), խեթ. šurpa «մաքուր» բառից (Յենսեն), շումեր. sup/b «մաքուր»

91 Արմ. Բ., հատ. 5, էջ 370—371։

92 ԱԲ, էջ 636 և ՆՀԲ, հատ. 2, էջ 481։

93 FD, AH, էջ 672։

94 Նույն տեղում։

95 ՆՀԲ, հատ. 2, էջ 481։

96 ԱԲ, էջ 639։ ԳԲ, էջ 838։ ՀԲԲ, էջ 521։

97 Н. Б. Янковская, Клинописные тексты из Кюль-Тепе, М., 1968, էջ 114, 115, 127, 223։

98 Պրոֆ. Գ. Ջահուկյանը միևնույն *k'au-k- արմատից հնարավոր է համարում սուգ և շոգ հայերեն ձևերի գոյացությունը։ Տե՛ս նրա Очерки..., էջ 195։

99 Արմ. Բ., հատ. 5, էջ 348—351։

100 FD, AH, էջ 639—640, 686։

պաշտոն» բառից (կարստ) և այլն, որոնք կամ անընդունելի են նշանակությունների տարբերության, կամ հնչյունական օրենքների ոչ միշտ լինելու պատճառներով¹⁰¹։

Հայերենի նշանակությամբ և հնչմամբ (šurbu) այս բառն առկա է նաև արադերենում, որի նշանակություններն ընկալվում են ըստ Ֆ. Դելիշի «Ասուրերենի բառարանի» «վսեմ, սուրբ, մեծ, վեհապանծ»¹⁰² հոմանիշներով։ Գոյականական ածանցով կազմված šurbattu ձևն ընկալվում է «մեծություն, սրբություն, վեհություն, վսեմություն» նշանակություններով։ Օրինակ՝ Ištar šurbat ilani «Իշթարը աստվածների սրբությունն է»։ Նրա նշանակություններն ստուգվում են նույնատիպ այն նախադասությունների միջոցով, ուր այն փոխարինված է լինում հաճախ rabu «մեծ, վսեմ, հզոր» բառով կամ SAL.EME դադափարադրով¹⁰³։

Մեր կարծիքով, ինչպես նեոը, Ալը, Խիպիլիկը, այնպես էլ Սուրբը, մինչքրիստոնեական կրոնից փոխանցված բառեր են, որոնք պահպանվել են ժողովրդական լեզվում (հմտ. ժող. «Սուրբն ասաց», «Սրբի դուռ», «Սրբի ոտն ընկնել» վերապրուկային արտահայտությունները)։

KITITU = ԲԹԵԹ

Հայերեն ԲԹԵՐ «կտավե զգեստ կամ կտավ» բառի ստուգաբանությունը առ այսօր հայտնի չէ։ Այն տալիս է «քթանէ շուան»¹⁰⁴, ԳԲ՝ «հինացած կտավի կտոր, հարսի հալաւ, հարսանիքի հաղնիկու լաթեր»¹⁰⁵, ՀԲԲ՝ «հարսի հարսանեաց հանդերձեղէնք»¹⁰⁶, Արմ. Բ.՝ «կտաւէ հասարակ զգեստ»¹⁰⁷ բացատրությունը։

Ս. Ամատունին բերում է օրինակներ ԲԹԵՐի գործածությունից՝ ժողովրդական ընկալմամբ՝ «Տերտերն առաջ նշանն օրհնեց... յետոյ քթէթն օրհնեց»¹⁰⁸։

Այս բառը նույն նշանակությամբ և հնչմամբ առկա է նաև արադական սկազգիր արձանագրություններում։ Մեյսներ-Ջոզեֆի «Աքադերենի բառարանը» տալիս է հետևյալ բացատրությունը՝ «kititu-ֆրանս շոր»¹⁰⁹։ Այս նշանակությունն ավելի է վստահելի դառնում շնորհիվ այն նույնատիպ նախադասությունների, ուր այդ բառը փոխարինված է համարժեք 3iG.3iR քթանի շոր» դադափարադրով։ Ավելի հաճախ էլ այդ բառից առաջ դրված է լինում TUG «կտորեղեն, շորեղեն» որոշիչը։ Օր.՝ TUG kititu «քթեթ (շոր)» կամ «քթեթ (կտոր)», «քթեթ (զգեստ)» և այլն¹¹⁰։

* * *

Հայերենի և արադերենի կամ հին ասուրերենի վաղ շփումների օգտին են խոսում նաև բազմաթիվ այլ փոխառություններ, որոնք հայերենում պահպանվել են իրենց հին հնչմամբ, մինչդեռ այդ նույն բառերը հետագայում սեմականներում կրել են զանազան փոփոխություններ։ Այսպիսի, օրինակ, արադերենի WATU «վարել, քշել, տանել, ղեկավարել» բայը հետագայում հնչյունափոխվել է և հնչել է ATU, մինչդեռ հայերենը պահպանել է հին ձևը՝ վարել. նույն «տանել, քշել, ղեկավարել» նշանակություններով։ Աքադերենի awatu «բան, խոսք, կարգադրություն» բառը հետագայում հնչյունափոխվել և դարձել է amatu և ապա՝ abatu, մինչդեռ հայերենը պահպանել է ամենահին արադական հնչումը՝ աւետ ձևով, որն առկա է աւետ-աւան, աւետ-ել, աւետ-ի և այլ ձևերում։ Աքադական kupru «կուպր, ձյութ» բառը այլ սեմականներում հնչում է kōper (եբր.), kupra (արամ.), kufra (ասոր.) և այլն, մինչդեռ հայերենը պահել է արադերենի հարազատ հնչումը՝ կուպր։

¹⁰¹ Արմ. Բ., հատ. 5, էջ 373—376; Г. Джаяукян, Очерки..., էջ 161.

¹⁰² FD, AH, էջ 610:

¹⁰³ Նույն տեղում:

¹⁰⁴ ԱԲ, էջ 834.

¹⁰⁵ ԳԲ, էջ 1111:

¹⁰⁶ ՀԲԲ, էջ 673:

¹⁰⁷ Արմ. Բ., հատ. 6, էջ 1471:

¹⁰⁸ ՀԲԲ, էջ 673:

¹⁰⁹ MS, AH, էջ 493:

¹¹⁰ Նույն տեղում: